

կանի ունելով՝ խմանէ, եւ մղեալ բռնութեամբ զպատերազմն՝ եսպան՝ ի նմին զխրոխտացեալն Խոսրով (1209): Եթէ ոչ ընդ սմա՝ ընդ յաջորդի նորին կոչեցելոյ Իզգէտտին Քէյքաուզ՝ մարտեաւ Լեւոն՝ ինմին ամի՝ յամսեան օգոստոսի, օգնականութեամբ Հիւանդանոցի ձիաւորացն, որոց նախայիշեալ Կարգապետ ժամանակին (Գուարին կամ Կէրէն de Montaigne) Կարին կոչէ Լեւոն՝ իթլթին, ինքնին մարտակից թուի եղեալ, եւ յաջողութեամբ վանեալ եւ չարաչար հարեալ զբազմահոյլ բանակ թշնամեացն. ընդ որ՝ ըստ արժանւոյն՝ մեծապէս բերկրեալ Լեւոնի, պարգեւեաց նիզակակցացն վաւերական կնքով եւ կրկին եւս վաւերականաւ Քահանայապետին Իննովկենտեայ, զՍելեւկիա բերդաքաղաք, զՆորբերդ եւ զԿամարտիաս՝ զերբեմն ժառանգութիւն զարմին Հենրեայ Սեբաստոսի, հանդերձ նահանգօք նոցին որ՝ իցամաքի եւ որ՝ իծովեզերին. եւ ծանոյց զայս Քահանայապետին յամսեան ապրիլի (1210), մեծապէս գովելով զձիաւորսն՝ մակաբէապէս արիացեալս, եւ արժանիս մեծաց վարձուց ըստ վաստակոց նոցին, այլ եւ՝ իշնորիս երեսաց Սրբազան հայրապետին, եւ յօժանդակութիւն հոգւոյ իւրոյ եւ նախնեաց իւրոց: Եւ ոչ այսու շատացեալ՝ այլով թղթով (յօգոստոսի, 1210) ծանուցանէր Քահանայապետին զի խոստացաւ պարգեւել նոցա եւ զԼարանտա քաղաք, զոր՝ իմտի ունէր թափել յայլազգեացն, կամ թոյլ տալ նոցա ինքնին ջանալ կորզել զայն²²²:

Իսկ յերկրորդում ամին (1211), դարձեալ խաղաց Լեւոն՝ իվերայ Քէյքաուզն Խոսրովու, ոչ միայնակ, այլ իբրեւ նիզակակից հօրեղբոր նորին եւ իւրոյ բարեկամի՝ Տուրքիլ շահի Կարնոյ. միաբան պաշարեցին զմեծ քաղաքն Կեսարիա, աղարտեցին զսահմանսն, եւ դաշամբ հաշտութեան եւ պարգեւօք դարձան յետս: Վիպասանն Վահրամ վասն այսր դիպուածի տողէ.

«ԶԿեսարիա զօրօք պատեալ
Եւ՝ իառնուլն մերձ ածեալ,
Ապա ոսկի բազում առեալ,
Եւ ընդ սուլտանըն դաշն եղեալ»:

²²² ... «Venerabiles Magistrum et conventum sancte domus Hospitalis, preterita estate, mense videlicet augusti, Sancte Sedis Apostolice amore ac reverentia, non solum nobis, verum etiam universe christianitati, magnum et necessarium contulisse succursum contra *infinitam* paganorum barbariem super nos et regnum nostrum aggregatam», etc. – **Epist. Innoc. III.**